«ՀՈՍԱՆՔ»
ԾՐԱԳՐԻ

36 ԿԵՏԵՐԸ

Հայկ Նազարյան

«Հոսանք»

ԾՐԱԳՐԻ 36 ԿԵՏԵՐԸ

Հայկ Նազարյան

Երևան, Հայաստան
2025թ.

hosank.net
info@hosank.net
t.me/hosank

©Նազարյան Հայկ, 2025

Այս աշխատությունը նվիրում եմ 44-օրյա դավադիր պատերազմում զոհված հայ քաջերի ու նահատակված հերոսների անմահ հիշատակին։

Նրանց թափած արյունը իզուր չէր, քանի որ ինչպես պատմությունն է ցույց տալիս՝ պարտված ժողովուրդների մեջքին հասնող մտրակի հարվածները դառնում են վերելքի նոր ավետիսներ….

Բովանդակություն

«Հոսանք» Ծրագրի 36 Կետերը..... 1

«Հոսանք»-ի խորհրդանիշն ու դրոշը..... 13

«Հոսանք»-ի և նրա Առաջնորդի մասին..... 15

Ինչո՞ւ և ինչպե՞ս միանալ կամ աջակցել «Հոսանք»-ին..... 19

«Հոսանք» Ծրագրի 36 Կետերը

«Հոսանք» ցեղակրոն քաղաքական շարժումն ինքն իր վրա անձնական պատասխանատվություն է վերցրել՝ չեզոքացնելու Հայաստանի անկախությանը, և ինչու ոչ՝ հայոց ազգին սպառնացող գլխավոր վտանգները: Այդ գլխավոր վտանգներն են՝ տագնապալից արտաքին անվտանգության խնդիրը, աղքատությունը, գործազրկությունը, արտագաղթը, ցածր ծնելիությունը, ինչպես նաև հայ ազգի օտարացումը, դեգրադացիան և պառակտումը: Իհարկե, իրականում այս բոլոր խնդիրները փոխկապակցված են, և անհնար կլինի լուծել մեկը՝ առանց մյուսները լուծելու: Այդ է պատճառը, որ բոլորը պետք է լուծվեն միասին, զուգահեռաբար:

Սակայն, նախքան թևքերը քշտելն ու անցնելը այս խնդիրների լուծմանը, նախ և առաջ պետք է կերտել ազգային պետություն. պետություն, որտեղ երկրի ռեսուրսները, կառավարման և քաղաքական-տնտեսական համակարգը, օրենքները և բոլոր ուժային լծակները կօգտագործվեն ազգի զարգացման, հայրենիքի անվտանգության ու բարգավաճման համար՝ այսպիսով ամրապնդելով մեր պետականության ինքնիշխանությունն ու անկախությունը:

Դրա համար «Հոսանքը»՝ որպես հայաստանակենտրոն և հայամետ քաղաքական կազմակերպություն, որը միևնույն ժամանակ Հայաստանի միակ ցեղակրոն քաղաքական շարժումն է, իրեն իրավունք է վերապահում մի օր գալ իշխանության և անցնել գործի՝ հայ ազգին ոտքի կանգնեցնելու և մեր պետությունը բոլոր առումներով հզորացնելու:

Հերթով նշում եմ, թե ինչպիսի քայլեր ենք նախաձեռնելու, որպեսզի կարողանանք լուծել վերոհիշյալ բոլոր գլխավոր խնդիրները և հաղթահարել մեր երկրին սպառնացող հիմնական մարտահրավերները:

1. Կառուցելու ենք ցեղակրոն գաղափարախոսության հիման վրա իսկական ազգային պետություն, որտեղ նվիրյալ, հմուտ հայ ազգային գործիչները իրենց համապատասխան պաշտոններում կնշանակվեն և անձնվիրաբար կկատարեն իրենց պարտականությունները՝ աշխատանքի ընդունվելով՝ ըստ իրենց կարողությունների: Այդ ազգային պետության համար անկախությունը պետք է լինի ոչ միայն գերագույն արժեք, այլև՝ սրբություն, իսկ նրա պաշտպանությունը՝ կյանքի վեհագույն իմաստը:

2. Արցախյան հարցի միակ լուծումը տեսնում ենք Արցախի ամբողջական միացմամբ Հայաստանին, և մեր գերագույն նպատակն է, հայ ազգին համախմբելով, կերտել անկախ, միացյալ ու հզոր Հայաստան, որը ապագայում կընդգրկի ոչ միայն ողջ Արցախը, այլև՝ Հայկական լեռնաշխարհի մյուս հողերը իր պատմական բոլոր նահանգներով հանդերձ:

3. Մեր կերտած ազգային պետությունը միանշանակ լինելու է հայաստանակենտրոն ու հայամետ, որտեղ պիտի լինեն հայեր, ովքեր բացառապես սպասարկում են Հայաստանի անկախ պետականության շահերը: Դրա համար անհապաղ կկատարվի լյուստրացիա, որի ընթացքում կբացահայտվեն օտար

երկրներին, միջազգային թշնամական կազմակերպություններին, շարժումներին ու օրակարգին սպասարկող անձինք և անմիջապես կպաշտոնազրկվեն, իսկ ավելի խիստ դեպքերում նաև կդատվեն: Սա նաև նշանակում է, որ փակելու ենք աղանդները, գաղտնի կազմակերպությունները, օթյակները և այլ ապազգային կառույցները, որոնք շարունակում են մեր ազգին մոլորեցնել, բարոյազրկել, հիասթափեցնել և պառակտել: Այս ամենը միանգամայն անհրաժեշտ է իրապես անկախ, հայկական քաղաքական դաշտ ու հասարակություն ունենալու համար:

4. Ազգային պետության կառավարման համակարգը կլինի արքայապետություն, որն իր մեջ կպարունակի ազգային սահմանադրական միապետության և արժանապետության սկզբունքները, որտեղ նաև կլինի մեկ գերագույն առաջնորդ ու հրամանատար: Առաջնորդը կարող է միայն հայ լինել և չպետք է ունենա երկքաղաքացիություն: Անթիվ կուսակցությունների երևույթը կդադարի իրականություն լինել: Առաջնորդն էլ կընտրվի բնակչության այն հատվածից, որն արտոնություն կունենա մասնակցելու ընտրություններին: Այդ արտոնությունը ձեռք բերելու համար նրանք առողջական ու մտավոր հատուկ քննություններ պետք է անցնեն: Ազգային ժողովի պատգամավորները կլինեն տարբեր ոլորտների մասնագետներ, ովքեր իրենց փորձից բխած կարծիքները ու մտքերը կարտահայտեն կարևոր խնդիրները լուծելու համար: Նման համակարգ անհրաժեշտ է, քանի որ ժողովրդավարությունը իրականում ամբոխավարություն է, որն ի վերջո վերածվում է ժողովրդավարական բռնապետության, և, որը, երկարաժամկետ հեռանկարում երբեք չի կարող սպասարկել ազգի շահերը: Մեր երկիրը պետք է կառավարվի ոչ թե անպատասխանատու, հայրենադավ ու աթոռներից կառչած պատեհապաշտ պաշտոնյաների կողմից, այլ՝ առաջնորդական իրական ջիղեր ունեցող, ազնիվ հայրենասերների կողմից, ովքեր իրենց կյանքի գործունեությամբ ու պայքարով արժանացել են կառավարության ղեկը ստանձնելուն:

5. Չեղարկելու ենք նոյեմբերի 9-ի տխրահռչակ ու հակահայ պայմանագիրը, որն, ըստ էության, Հայաստանի անկախության դեմ պայմանագիր է, որը մեր պետության պարանոցին դավադրաբար փաթաթվեց 44-օրյա պատերազմի ավարտին՝ ռուս-թուրք-սիոնիստական դաշինքի կողմից, քանի որ այդ պայմանագիրը իրավական հիմք է տալիս մեր արտաքին թշնամիներին՝ շարունակելու իրենց ագրեսիվ ռազմական գործողությունները հայոց պետականության դեմ:

6. Դառնալու ենք Հայաստանի առաջին հանրապետության իրավահաջորդը և օգտագործելու ենք պատմական ու իրավական ուժ ունեցող բոլոր հին փաստաթղթերն ու քարտեզները, որոնք նպաստավոր կլինեն մեր ազգի համար, բայց միաժամանակ լավ հասկանալով, որ այդ պայմանագրերը ու թղթերը իմաստ ունեն, եթե փոխկապակցված ու հավասարակշռված են ուժի հետ: Իրավական կողմն ու թղթերը շատ կարևոր են, բայց, եթե այդ թղթերի հետևում իրական ռազմական ուժ չլինի, այդ թղթերը ոչ մի արժեք չեն ունենա: Սա է միակ ձևը դիվանագիտության մեջ օբյեկտից սուբյեկտ դառնալու: Հետևաբար, մենք մեր հույսը

նախ և առաջ մեզ վրա պետք է դնենք և հայ ազգին կրկին անգամ ռազմաքաղաքական ուժի գործոնի վերածենք, որպեսզի թշնամու ուժին կարողանա արձագանքել ավելի մեծ ուժով և հարվածներին՝ ավելի հուժկու հակահարվածներով:

7. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը լինելու է մեր արտաքին դիվանագիտության կարևորագույն նպատակներից մեկը:

8. Դաշինքները կկազմվեն այն երկրների ու միությունների հետ, որոնց շահերը ոչ մի ձևով չեն համընկնում մեր երկրի շահերի հետ: Միաժամանակ կփնտրենք այնպիսի դաշնակիցների, որոնց ազգային ու պետական շահերը մեծամասամբ կհամընկնեն մեր շահերի հետ: Նման բնական դաշնակիցներ կարող են լինել եվրոպական ազգերը և Իրանը, քանի որ ունենք նույն գենետիկ ժառանգությունը: Կարող ենք նաև զուտ ռազմական դաշնակիցներ լինել այլ մեծ պետությունների հետ, որոնց հետ չկա նման գենետիկ կապ, բայց դա այն դեպքում, եթե լինի շահերի համընկնում: Նոր դաշնակիցներ ձեռք բերելուց հետո նպատակ կլինի նրանց հետ ոչ միայն ռազմաքաղաքական սերտ հարաբերություն ունենալ, այլև պարբերաբար զինավարժություններ անցկացնել:

9. Հայաստանի զինված ուժերի ռազմավարությունը պետք է ամբողջությամբ վերափոխվի, որպեսզի կառուցվի իսկապես հայկական բանակ, որը համապատասխան կլինի հայկական հոգեբանությանը, աշխարհագրությանն ու էությանը, և ոչ ընդամենը մի ուրիշ երկրի բանակի նախագիծը պատճենված: Սա, իհարկե, նշանակում է, որ Հայոց բանակը պետք է նաև ակտիվ պաշտպանության ու հարձակողական բանակի վերածվի, քանի որ պաշտպանվելու ամենալավ ձևը հարձակվելուն պատրաստ լինելն է, և ի վերջո սա է միակ ճանապարհը նոր հաղթանակներ ձեռք բերելու համար: Մեծ կարևորություն կտրվի նաև քարոզչությանը, քանի որ քարոզչական պատերազմը պատերազմների կարևորագույն գործոններից մեկն է: Մեր ռազմական ակադեմիաներում ծայրից ծայր կուսումնասիրվի, թե ինչպես հաղթեցինք Արցախյան ազատամարտում և ինչպես պարտվեցինք 44-օրյա դավադիր պատերազմում, որպեսզի ճիշտ դասեր կարողանանք քաղել: Առանց հզոր ու մարտունակ հայկական բանակի, որն ունակ է հաղթանակներ կերտելու, անհնար կլինի պահպանել ու ամրապնդել մեր ինքնիշխանությունն ու անկախությունը, քանի որ հզոր հայկական բանակն է մեր անվտանգության և իր հերթին մեր անկախության միակ երաշխիքը: Այսպիսով՝ մենք կկարողանանք դիմակայել ռուս-թուրք-սիոնիստական տանդեմին, որպեսզի նրանք իրենց գերակայությունը չհաստատեն մեր հայրենիքի վրա: Մեր նպատակն է Հայաստանը դարձնել ամենառազմականացված երկիրը այս աշխարհում:

10. Մեր բանակի ռազմավարությունը փոխելով և ստեղծելով իսկական հայկական բանակ՝ մենք նոր կմտածենք զենքեր ձեռք բերելու մասին, որոնք համապատասխան կլինեն այդ ռազմավարությանը, այլապես այդ զենքերը շատ մեծ արժեք չեն ունենա:

Դաշնակից երկրներից զենքեր գնելուն զուգահեռ՝ պետք է ունենանք և զարգացնենք մեր սեփական ռազմարդյունաբերությունը, որպեսզի մենք կարողանանք կամաց-կամաց արտադրել մեզ անհրաժեշտ բոլոր զենքերը, կամ գոնե այդ զենքերի մեծ մասը: Որքան էլ դժվար ու բարդ թվա այդ ամենը այս պահին, պետք է սկսենք փոքր քայլերից, քանի որ սա լավագույն ձևերից է, որ մեր անվտանգությունը կախված պահենք միմիայն մեզնից:

11. Բանակը արդիականացնելու ենք, դիրքերը վերանորոգելու ու ամրացնելու ենք, բայց միաժամանակ խստացնելու ենք զինծառայությունը: Զինվորական վարժություններն ու պատրաստությունը խստացնելու ենք, որպեսզի ոչ միայն ունենանք ժամանակակից բանակ, այլև՝ ամեն տեսակի դժվարություններ հաղթահարելուն պատրաստ ռազմիկներ, ովքեր անցած կլինեն բազմաթիվ դժվար տակտիկական վարժությունների միջով: Նրանք, ովքեր առողջական խնդիրներից ելնելով չեն կարողանա հավասար ծառայել մյուսների հետ, կծառայեն այլ միջոցներով: Աղջիկների 6-ամսյա պարտադիր զինծառայություն կավելացվի, բայց տղաներից զատ, ավելի թեթև ու բարենպաստ պայմաններում, որտեղ շեշտը կդրվի բուժօգնության վրա, որպեսզի շատ ծայրահեղ դեպքերում կանայք էլ կարողանան հայրենիքի պաշտպանության գործիք դառնալ: Վերապատրաստման համար տարին երկու անգամ կկանչվեն նախկին ծառայածները, որպեսզի թարմացնեն իրենց գիտելիքները: Որքան շատ քրտնենք խաղաղության ժամանակ, այնքան ավելի քիչ արյուն կթափենք պատերազմի ժամանակ: Մենք այնպիսի բանակ պիտի կառուցենք, որ խաղաղություն մուրալու փոխարեն մենք կարողանանք մեր կամքը թելադրելով՝ խաղաղություն պարտադրել մեր թշնամիներին:

12. Պարտադիր զինծառայությունը անհրաժեշտ պահպանելուց բացի, կլինեն նախազինվորական ամառային ու ձմեռային ճամբարներ 12-18 տարեկան երիտասարդների համար, որտեղ շեշտը կդրվի զենքերին տիրապետելու, բնության արշավների, մարտարվեստի և թիմային խաղերի վրա: Երեխաները պետք է փոքրուց դաստիարակվեն ռազմական հոգեբանությամբ, որպեսզի բոլորը կարողանան պատրաստ լինել հայրենիքը պաշտպանելուն՝ անկախ նրանից, թե ինչ մասնագիտություն կունենան ապագայում: Դպրոցներում երեխաները բացի հիմնական գիտելիք ստանալուց, կսովորեն այնպիսի հմտություններ, որոնք իրենց առօրյա կյանքում անհրաժեշտ կլինեն: Կսովորեն նաև ողջ մնալու արվեստը, և դպրոցներում հարկավոր կլինի մարտարվեստի ու ծանրամարտի ուսուցանումը: Մեր նպատակն է մեծացնել կաշվի պես կոշտ ու պողպատի պես պինդ հայկազունների սերունդ, քանի որ առողջ միտքն ու հոգին միայն կարող են լինել առողջ մարմնի մեջ:

13. Զենքեր կրելու իրավունք կունենան բոլոր առողջ և ոչ քրեական անցյալ ունեցող քաղաքացիները: Անվճար հրացաններ, ինչպես նաև տներ կտրամադրվեն սահմանամերձ գյուղերում ապրող մեր բոլոր հայրենակիցներին, քանի որ մեր հայրենիքը սկսվում է սահմանից: Հրաձգարաններ կլինեն բոլոր քաղաքներում ու

գյուղերում, որոնք նաև շատ մատչելի գներ կունենան: Այս ամենն անհրաժեշտ է իսկական ազգ-բանակ դառնալու համար:

14. Մեր կառուցած ազգային պետությունում, Հայաստանի քաղաքացի կարող է լինել միայն արմատներով հայ մարդը կամ, բացառությունների դեպքում, հայ ազգին նման ազգի ներկայացուցիչը, և միայն Հայաստանի քաղաքացին կկարողանա անշարժ գույք գնել Հայաստանում: Սփյուռքում ապրող մեր հայրենակիցները Հայաստանի քաղաքացիություն ստանալու համար պետք է գոնե հինգ տարի ապրեն իրենց հայրենիքում:

15. Խստացնելու ենք վերահսկողությունը՝ մշտական բնակության նպատակով Հայաստան ներգաղթող ոչ հայ քաղաքացիների նկատմամբ՝ նրանց մուտքի սահմանափակումները էապես խստացնելով: Սա անհրաժեշտ է, որովհետև բաց սահմանների քաղաքականությունը, ինչպես տեսնում ենք Ամերիկայում ու Եվրոպայում, միանշանակ կործարար է ազգի, հատկապես՝ մեզ նման փոքրաթիվ ազգի համար: Լավ ու ամուր սահմանները ստեղծում են համերաշխ հարևաններ:

16. Ներգաղթյալների աշխատուժի կարիք չենք ունենա, երբ մենք արտագաղթը կասեցնելով, երկիրը զարգացնելով ու ծնելիության աճը բարձրացնելով՝ ունենանք բացառապես հայկական աշխատուժ: Այդ պարագայում մենք աշխատանքի համար երբեք կախված չենք լինի օտար ազգերից ու ներգաղթյալներից: Մենք մեր սեփական մտքով ու ձեռքերով ենք կառուցելու ու շենացնելու մեր երկիրը:

17. Ապահովելու ենք հայ ազգի բնակչության աճը՝ չափազանց շատ բարձրացնելով ծնելիությունը՝ տարբեր առատաձեռն արտոնություններ տալով նորապսակ առողջ հայ զույգերին, և տարբեր այլ ծրագրեր խրախուսելով, որոնք կնպաստեն շուտ ամուսնություններին ու շատ երեխաներ ունենալուն, որպեսզի բազմանան հայ ավանդական ընտանիքները: Տնտեսությունը զուգահեռ զարգացնելով՝ այնպիսի սոցիալական համակարգ կստեղծենք, որ մայրերը աշխատելու կարիք չեն ունենա, իսկ ովքեր որ երեխաներ ունենալուց հետո կցանկանան աշխատել, կունենան առավելություններ և արտոնություններ՝ համեմատ նրանց հետ, ովքեր դեռևս ծնող չեն դարձել: Սրա հետ մեկտեղ նաև առողջ զույգերի համար արգելվելու են արհեստական վիժումները: Կկազմակերպվեն հատուկ միջոցառումներ, որոնցում կստեղծվի հարմար միջավայր, որպեսզի միայնակ երիտասարդները հնարավորություն ունենան ծանոթանալու, շփվելու և առողջ հարաբերություններ կառուցելու: Նորապսակ հայ զույգերին զրո տոկոսով տան վարկեր կտրամադրվեն, որոնց գումարը կնվազի ամեն երեխա ունենալու դեպքում: Ազգային պետությունը պարտավոր է ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները, որպեսզի նորաստեղծ հայ ընտանիքները պաշտպանված լինեն՝ թե՛ սոցիալապես, թե՛ հոգեբանորեն: Հայ կինը պետք է կարողանա առանց վախի և անհանգստության մեծացնել առնվազն 3–4 երեխա՝ գիտակցելով, որ պետությունն իր կողքին է: Մեր ազգի ապագան սկսվում է մեր մայրերի արգանդներում՝ հենց այնտեղ է որոշվում մեր գոյության

շարունակականությունը։

18. Մեր կերտած ցեղակրոն պետությունում քաղաքական-տնտեսական համակարգը հիմնված է լինելու արտադրողական ձեռնարկության՝ ազգայնական և սոցիալիստական սկզբունքների վրա։ Դա մի համակարգ է, որտեղ գլխավոր շեշտը դրվում է իրական ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման վրա, հատկապես՝ կարևոր ոլորտներում, ինչպիսիք են՝ ենթակառուցվածքները, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և էներգետիկան։ Այս համակարգում հաճախ կա պետական մասնակցություն կամ ուղղորդում, և նպատակն է ծառայել ազգային շահերին, ոչ թե միայն շահույթ ստանալուն, ինչպես տեսնում ենք կապիտալիստական համակարգում, որը հասարակությանը հասցնում է ազահության ու սպառողականության գագաթնակետին։ Արտադրողական ձեռնարկությունը կարևորում է ազգային արդյունքն ու օգտակարությունը՝ կիրառելով կենտրոնացված պլանավորում, նպատակային ներդրումներ և աշխատանքի կազմակերպում՝ ռեսուրսները ճիշտ ուղղորդելու համար։ Այդպիսով, եթե կապիտալիստական ազատ շուկան թյուրիմացորեն կարծում է, որ իբրև միայն շահույթը կբերի բարգավաճում, ապա արտադրողական ձեռնարկությունն իր նպատակը տեսնում է ազգի հզորացման, ինքնաբավության և համընդհանուր բարօրության մեջ՝ արտադրության և աշխատանքի միջոցով՝ առանց աշխատավորների իրավունքները չարաշահելու։ Մենք պետք է կարողանանք՝ ազատ շուկայական սկզբունքների վրա հիմնված մասնավոր սեփականության ու բիզնեսի գաղափարները և պլանավորված սոցիալիստական տնտեսության դրական կողմերը միավորել՝ սինթեզելով այդ երկուսը մեկ տնտեսական համակարգի մեջ։ Այս երկու համակարգերի ճիշտ հավասարակշռությունը կվերացնի հարստության չափազանց անհավասար բաշխումը և կլուծի ծայրահեղ աղքատության խնդիրը։ Արտադրողական ձեռնարկությունը կարելի է դիտարկել որպես կապիտալիզմի և սոցիալիզմի համադրված գործնական նախագիծ, որը վերցնում է ուժեղ ու դրական կողմերը երկու համակարգերից՝ խուսափելով նրանց ծայրահեղություններից։ Կապիտալիզմից այն վերցնում է մասնավոր սեփականության կամ շահույթի խթանները, մրցակցությունը և արդյունավետ արտադրությունը, ինչպես նաև՝ տեխնոլոգիական նորարարությունը, որը խթանվում է արտադրական նպատակներով։ Իսկ սոցիալիզմից այն ներմուծում է ազգային պլանավորումն ու խոշոր ոլորտների համակարգումը, ինչպես նաև աշխատանքային արժեքների վրա դրված շեշտը՝ որտեղ աշխատանքը դիտվում է ոչ միայն որպես անհրաժեշտություն, այլև որպես արժանապատիվ և կենսական գործունեություն։ Պետական մասնակցությունը դարձվում է ուղղորդիչ ուժ՝ ներդրումների համար, որոնց նպատակը հանրային շահի սպասարկումն է, ոչ թե միայն մասնավոր շահույթը։ Այս համակարգը նորարարության մթնոլորտ կստեղծի, որը կխրախուսի ձեռներեցություն ու արտադրողականություն բոլոր ոլորտների համար։ Նման մի համակարգում հսկա կապիտալիստ քրեաօլիգարխները ու օտար ընկերությունները չեն կարողանա ինչքան ցանկանան և ինչպես ցանկանան չարաշահեն մեր երկրի ռեսուրսները միայն իրենց գրպանները լցնելու համար։ Սա

նշանակում է, որ այդ քրեաօլիգարխները, ովքեր ապօրինաբար հարստացել են մեր երկրի բարելավման հաշվին, ունեզրկվելու են, և վերացվելու է նրանց մենաշնորհությունը: Սրան զուգահեռ՝ օտար ընկերությունները այլևս չեն կարողանա մեր ընդերքը թալանել, քանի որ մեր ընդերքը և երկրի ողջ ռեսուրսները ազգայնացվելու են: Այս ամենը կխթանի փոքր, ինչպես նաև մեծ բիզնեսների աճը և չափազանց շատ կգնահատվեն աշխատասեր հայերը, ովքեր իրենց քրտինքով վաստակել են իրենց գումարը: Մեր կերտած ազգային պետության մեջ, որտեղ գործելու են արտադրողական ձեռնարկության սկզբունքները, համերաշխություն կլինի բոլոր ոլորտների աշխատավորների ու դասակարգերի միջև:

19. Ցեղակրոն քաղաքական-տնտեսական համակարգում բոլոր աշխատել ցանկացող ու կարող քաղաքացիներին, հավասար արդյունք տալու փոխարեն, կտրվեն հավասար հնարավորություններ զարգանալու համար, որի շնորհիվ մեր հասարակության մեջ առաջ կգնան ու կզարգանան աշխատասերները, և կտուժեն չաշխատող դատարկաբանները: Այս համակարգում աշխատանքի կընդունվեն ամենակարող ու ընդունակ մարդիկ, և ոչ երբեք «խնամի, ծանոթ, բարեկամ» քաղքենի մոտեցմամբ: Ամենամեծ արժեքը կունենան ոչ թե նրանք, ովքեր պարզապես ավելի շատ փող ունեն, այլ նրանք, ովքեր իրենց արդար վաստակած գումարով ու տաղանդով ամենաշատ օգուտն են տվել հանրությանը, քանի որ կապիտալը պետք է ծառայի ազգին, և ոչ հակառակը: Այս ամենն ինքնաբերաբար կբերի աշխատավարձերի ու թոշակների բարձրացմանը: Մեր քաղաքական-տնտեսական համակարգի հիմնական նպատակը կլինի մարդկանց կենսապայմանների բարելավումն ու սոցիալական արդարության ստեղծումը:

20. Տնտեսությունը ոտքի ենք կանգնեցնելու լիովին նոր բանկային համակարգ հիմնադրելով՝ ստեղծելով Հայ ազգային պետական բանկ, որտեղ մերժվելու են օտար ֆինանսական կազմակերպություններից բարձր տոկոսներով վարկերը, որոնք մեր պետությանն ու քաղաքացիներին շարունակում են խեղդած պահել վարկերի տակ: Այդ վարկերի դիմաց մենք ստիպված ենք լինում վաճառել մեր երկրի իրական ռեսուրսները, ինչը պարզապես անթույլատրելի է: Միայն Հայ ազգային պետական բանկը փող ստեղծելու բացառիկ իրավունքներ կունենա, որը նախատեսված կլինի շրջանառության մեջ մտնելու համար, և շրջանառության մեջ գտնվող փողը հավասար կլինի հայ ազգի արտադրական ներուժի և աշխատանքային ջանքերի համադրությանը: Այս հաշվարկում ներառված պարամետրերը լիովին թափանցիկ են լինելու ժողովրդի համար: Մեր դրամավարկային համակարգը լիովին այլ սկզբունքով կաշխատի, որտեղ մեր երկրի արժույթը կամ թղթային փողը արժեք կունենա ուղղակիորեն կապված ոչ թե ոսկու կամ այլ թանկարժեք մետաղների հետ, ինչպես «ոսկու ստանդարտ»-ը օգտագործող երկրներում, այլ՝ աշխատանքի հետ՝ այդպիսով արդյունավետորեն կիրառելով «աշխատանքային ստանդարտ» հայեցակարգը, որը արդար ու ծաղկող տնտեսություն ունենալու լավագույն տարբերակն է: Այնպիսի տնտեսություն

կստեղծենք, որտեղ օտարերկրյա ներդրողները իրենց ցանկությամբ, և ոչ մեր խնդրանքով, կուզենան ներդրումներ անել մեր երկրում:

21. Ընդունելով, որ ներկայիս համաշխարհային ֆինանսական համակարգը հիմնված է արհեստական և փուչ արժեքների վրա և անխուսափելիորեն մոտենում է համակարգային փլուզման, մենք պարտավոր ենք նախապես պատրաստվել այդ զարգացումներին՝ նոր տնտեսական օրենսդրությամբ, որը կձևափոխի Հայաստանի տնտեսական համակարգը արմատական փոփոխություններով: Կձևավորվի նոր, արդիական ու ինքնիշխան տնտեսական մոդել, որն առավելագույնս կազատագրի ազգային տնտեսությունը արտաքին կախվածությունից և կհամապատասխանի ժամանակակից աշխարհաքաղաքական պատկերին ու պահանջներին: Նոր օրենքներով նախատեսվում է ստեղծել հզոր վերահսկող մարմին՝ կանխելու կոռուպցիան, խոշոր չարաշահումները և շուկայում մենաշնորհների ձևավորումը: Մեր տնտեսական զարգացման հիմքում լինելու է գործարար հայ աշխատավորը, ում կտրամադրվեն հնարավորություններ՝ կառուցելու նոր մայրուղիներ, արտադրական հզորություններ, բնակելի շենքեր և ենթակառուցվածքներ՝ երբեք չզիջելով որակին: Ամեն առողջ ու ունակ քաղաքացի կունենա աշխատանքի հնարավորություն, և աշխատանքը ոչ միայն արժանապատիվ ապրուստի միջոց կլինի, այլև՝ ազգային նվիրում: Հայ աշխատավորը ու գյուղացին լիարժեք սոցիալական պաշտպանություն և պետական աջակցություն կստանան՝ արժանապատիվ պայմաններում կատարելու իրենց հայրենանվեր աշխատանքը: Մեր տնտեսության փիլիսոփայության առանցքում լինելու է «երջանկություն՝ աշխատանքով» սկզբունքը, որի հիման վրա հայ ազգը նորովի կմոտենա աշխատանքին՝ այն ընկալելով որպես ստեղծագործական և ազգային հզորացման ճանապարհ:

22. Գյուղատնտեսությունը կզարգացնենք՝ պետական մեծ արտոնություններ տալով գյուղացիներին, ովքեր ցանկանում են հող մշակել ու ջերմոցներ կառուցել՝ նրանց տալով օրինակ՝ հարկային սուբսիդիաներ: Պետք է ձգտենք հնարավորինս մենք մեր պարենային անվտանգությունն ապահովել, որպեսզի սնունդի առումով կախված չլինենք այլ երկրներից, քանի որ այս հարցում ինքնաբավ լինելով՝ մենք կամրապնդենք մեր ինքնիշխանությունը: Սա, իհարկե, նշանակում է, որ մեր ազգի համար ավելի շատ հող է պետք, հատկապես, երբ հաշվի առնենք այն, որ ծնելիությունը ու հայրենադարձությունը աճելու է: Մենք պետք է ձգտենք ընդարձակել մեր սահմանները՝ ազատագրելով մեր կորցրած հողերը, քանի որ ներկայիս Հայաստանի սահմաններով ոչ միայն շատ դժվար կլինի ինքնիշխանությունը պահպանել, այլև՝ մեր պարենային անվտանգությունը չենք կարող բավականաչափ ապահովել:

23. Մեր արդյունաբերության զարգացմանը պետք է տրվի նոր որակի խթան՝ դուրս գալու ներկայիս սահմանափակված վիճակից, որտեղ գերակշռում են միայն հյուրանոցների, ռեստորանների և եկեղեցիների շինարարությունները: Հայրենի արդյունաբերությունը պետք է կենտրոնանա հատկապես հաստոցաշինության,

տեխնոլոգիական, մեքենաշինական և վերամշակման ոլորտների վրա։ Պետությունն առաջնահերթ խրախուսելու է ձեռներեցներին՝ ներդրումներ կատարելու արդյունաբերական ոլորտներում՝ նրանց տրամադրելով հարկային արտոնություններ, պետական աջակցության ծրագրեր և տեխնիկական հնարավորություններ։ Մեր ռազմավարական նպատակն է հնարավորինս ավելացնել ներմուծմանը փոխարինող արտադրանքը և ձևավորել բարձր տեխնոլոգիական և ինժեներական ներուժ՝ Հայաստանի ինքնաբավությունն ու տնտեսական անվտանգությունը ապահովելու համար։ Հայաստանը պետք է դադարի դիտարկվել բացառապես որպես զբոսաշրջային ուղղություն։ Պետք է դառնա երկիր, որտեղ մարդիկ ապրում, ստեղծագործում, արտադրում և զարգանում են՝ ունենալով լիարժեք արդյունաբերական համակարգ։

24. Ազգային պետությունը նպատակ ունի վերահսկել և կարգավորել մեդիա տարածքը՝ հիմնավորելով ազգային արժեքներին հնազանդ քարոզչական համակարգ, որը կզսպի նեոբոլշևիկյան, ֆեմինիստական, ԼԳԲՏ, լիբերալ, «գողական» ենթամշակույթների և այլ ապազգային ազդեցությունները, որոնք չեն համապատասխանում մեր ազգային արժեքներին և խաթարում են հասարակության միասնությունը ու ազգային ինքնությունը։ Սա անելով՝ մենք մեր հայ ազգային մշակույթի բոլոր սուրբ արժեքները պահպանելու ու պաշտպանելու ենք։ Մեդիան ընդամենը զենք է, և վստահ ենք՝ այդ զենքը ճիշտ ձեռքում հայտնվելու դեպքում, մենք մեր հայրենակիցներին փչացնելու փոխարեն՝ դաստիարակելով բարձրացնելու ենք, որպեսզի դառնան Հայաստանի արժանապատիվ քաղաքացիներ։

25. Փակելու ենք բոլոր տեսակի խաղատները, գիշերային ակումբները և արգելելու ենք պոռնոգրաֆիայի տարածումը։ Ավելի մեծ պայքար ենք մղելու թմրամոլության և նմանատիպ այլ մոլուցքների դեմ, և կլինեն վերականգնողական կենտրոններ նման մոլուցքներից կախվածություն ունեցող անձանց համար, որտեղ կկիրառվեն բնական բուժման բազմաթիվ տարբեր միջոցներ։

26. Դպրոցներում, համալսարաններում և բոլոր այլ պետական կառույցներում, ինչպես նաև գովազդներում քարոզելու ենք առողջ ապրելակերպ, որպեսզի բոլորը սովորեն ճիշտ սնվելու և մարզվելու ձևերը։ Պետության կողմից հովանավորված մարզասրահի ցանց կլինի մեր հայրենիքի տարբեր անկյուններում, որի անդամավճարը անվճար կամ շատ մատչելի կլինի։ Բժիշկները ընդամենը դեղեր նշանակելու փոխարեն, պարտադիր պետք է սովորեն բնական միջոցներով հիվանդներին բուժել։ Մեզ համար ավելի կարևոր ու իմաստալից է հիվանդությունները կանխել առողջ ապրելակերպով, քան թողնել, որ դրանք զարգանան և մահացու դառնան մեր հայրենակիցների համար։ Սրա հետ մեկտեղ բժշկությունն անվճար կլինի բոլոր քաղաքացիների համար։ Առանց առողջ քաղաքացիների չենք կարող առողջ ազգ ունենալ, քանի որ առողջ ազգը բաղկացած է առողջ քաղաքացիներից։

27. Հայագիտությունն ու հայոց պատմագիտությունը պարտադիր առարկաններ կլինեն դպրոցներում, որպեսզի յուրաքանչյուր հայ կարողանա իր հնարավորության սահմաններում պայքարել մեր պատմության ու ինքնության կեղծիքների դեմ, որոնք տարածում են մեր թշնամիները: Մի ազգ, որը լավ չի ճանաչում իր պատմությունը չի կարող ինքն իրեն լավ ճանաչել ու չի կարող արդյունավետ կերպով պայքարել իր ինքնությունը պահպանելու համար:

28. Հայոց լեզուն, լինելով մեր մշակույթի անկյունաքարը, մաքրվելու է բոլոր տեսակ աղավաղումներից: Մեդիայում միայն խոսվելու է մաքուր հայերեն, և խանութները, օրինակ՝ պետք է նախ և առաջ ունենան հայկական անուններ հայատառ գրված, և Հայաստանում ցանկացած հանրային վայրում աշխատող մարդ պետք է տիրապետի հայերենին: Չենք կարող հայրենասեր լինել, եթե նախ և առաջ չլինենք լեզվասեր:

29. Նոր խթան ենք տալու տեխնիկական գիտությանը, որը, ցավոք սրտի, Հայաստանում մահամերձ վիճակում է գտնվում: Ապահովելու ենք գիտնականներին ու ճարտարագետներին՝ նրանց տալով առավել արտոնություններ, քանի որ գիտության զարգացումը ուղիղ կապված է մեր անվտանգության համակարգի զարգացման հետ: Այսպիսով՝ մենք պետք է ստեղծենք լիովին նոր գիտություն, որը մեզ առավելություն կտա մյուս երկրների, հատկապես՝ մեր թշնամիների նկատմամբ: Աշխարհին սպասվում է էներգետիկ մեծ ճգնաժամ, այդ իսկ պատճառով մենք պետք է ձգտենք ստեղծել էներգիա ստանալու տարբեր ու ավելի արդյունավետ միջոցներ, որպեսզի որքան հնարավոր է կախված չլինենք նավթից ու գազից: Նպատակադրված ենք, որ հայի հանճարեղ միտքը կրկին անգամ ցույց տանք աշխարհին՝ Հայաստանը երկիր մոլորակի վրա դարձնելով գիտության կենտրոնը:

30. Բնապահպանությունը մեր ուշադրության կենտրոնում է լինելու, քանի որ մեր բնությանը վնասելով՝ մենք միայն ինքներս մեզ ենք վնասում: Երբ մեր գյուղատնտեսությունը ճիշտ ռելսերի վրա դնենք, մենք կկարողանանք չափազանց նվազեցնել անտառահատությունը, ինչպես նաև ջրի ու օդի պղտորումը: Մեր հանքերի չարաշահումը տարբեր ընկերությունների կողմից կկասեցվի, և Հայաստանի ընդերքը կպատկանի միայն Հայաստանի պետությանը, և իր հերթին՝ Հայաստանի քաղաքացիներին: Համակարգ կմշակվի, որտեղ դպրոցների աշակերտները, համալսարանների ուսանողները, զորամասերի զինվորները, և ինչու չէ, նույնիսկ բանտերի կալանավորները պարբերաբար կզբաղվեն աղբահավաքությամբ: Վերամշակման գործարաններ կկառուցվեն ամեն քաղաքում ու գյուղում, որպեսզի աղբաթափությունը կարողանանք արմատախիլ անել մեր երկրում: Սրան զուգահեռ՝ կենդանիների պաշտպանության իրավունքները կշատացվեն, և կենդանիների նկատմամբ սադիստական ու դաժան վերաբերմունքը քրեորեն դատապարտելի կլինի: Բնապահպանության համար կենդանական աշխարհի պաշտպանությունը հարկավոր է, քանի որ կենդանիները բնության

անբաժանելի մասն են, և անհնար կլինի մեկը պաշտպանել առանց մյուսի: Մեր նպատակն է ավելի մաքուր ու ավելի կանաչ երկիր ստեղծելը:

31. Համալսարանների ուսուցումը անվճար կլինի, և ուսանողները կդաստիարակվեն՝ գիտակցելով, որ դիպլոմ ստանալը միայն աշխատանք ձեռք բերելու համար չէ, այլն՝ հասարակությանը օգտակար լինելու համար:

32. Արգելելու ենք տարբեր խաղարկումները ու այդ խաղարկումների հետևում կանգնած տարբեր կազմակերպությունները, որոնք նպաստում են Հայաստանի արտագաղթին, որն, ըստ էության, մեր հայրենիքի արյունահոսությունն է: Միաժամանակ որքան հնարավոր է կապեր ենք ստեղծելու Սփյուռքում ապրող մեր հայրենակիցների հետ, ովքեր ուզում են իրենց գիտելիքով ու տաղանդով, և ոչ միայն գումարով, օգտակար լինել մեր հայրենիքին: Սա նշանակում է, որ սփյուռքահայությունը միայն չի դիտարկվելու որպես փող «կթելու» աղբյուր, այլ տարբեր միջոցներով կարևոր գործոն՝ Հայաստանի բարելավման ու զարգացման համար: Այնուամենայնիվ, մենք հասկանում ենք, որ սփյուռքահայությունը հավերժ երևույթ չէ, քանի որ ձուլումն անխուսափելի է, անկախ նրանից, թե մենք որքան փորձենք հետաձգել այն: Դրա համար սփյուռքահայերի հետ համագործակցելուն զուգահեռ՝ պետք է նրանց վերջնական վերադարձի համար բարենպաստ պայմաններ ստեղծենք: Մեր հայրենակիցների արտագաղթը կասեցնելը հնարավոր կլինի, եթե մենք միաժամանակ աշխատենք արտագաղթածներին հետ բերել Հայաստան, քանի որ այդ երկուսն իրար հետ շաղկապված են: Հայը արժանապատիվ ապագա կարող է տեսնել միմիայն իր հայրենի հողի վրա:

33. Համաչափ տնտեսական զարգացում կապահովենք բոլոր քաղաքների ու գյուղերի համար, որպեսզի ազգաբնակչությունը հավասար բախշվի մեր երկրում, քանի որ «երևանակենտրոն» համակարգը կործանարար է Հայաստանի ընդհանուր բարգավաճման ու զարգացման համար: Հայաստանում ամեն քաղաք ու գյուղ նույնքան արժեք ու կարևորություն պետք է ունենան, որքան՝ կողքի գյուղն ու քաղաքը:

34. Այսուհետ ինչ շինարարություն նախաձեռնվի՝ նախ և առաջ ունենալու է մասնագետ ճարտարապետների կողմից գծագրված հստակ նախագիծ, և շեշտը միշտ դրվելու է որակի, գեղեցկության ու ապահովության վրա՝ համապատասխանելով միջազգային ամենաբարձր չափանիշներին: Սա նաև նշանակում է, որ ոչ միայն նորակառույց շենքերը պետք է ունենան ապաստարաններ ռազմական դրության համար, այլև մեր ամբողջ երկրում պետք է կառուցվեն պաշտպանության բունկերներ, ինչպես կան, օրինակ՝ Շվեյցարիայում: Մեր բոլոր քաղաքները ու գյուղերը պետք է հանդիսանան որպես ամրոցներ ընդհանուր պետության պաշտպանության համար:

35. Համերաշխություն ենք ստեղծելու քրիստոնյաների ու հեթանոսների միջև՝ ցույց տալով բոլորին, որ իրական քրիստոնեության ու հեթանոսության հիմքում նույն արիական վեհ արժեհամակարգն է ու նույն արիական ապրելակերպի քարոզը:

36. Հայաստանը՝ որպես եվրոպական քաղաքակրթության բնօրրան, մեր կառավարման ժամանակ ստեղծվելու է նոր դաշինքի կառույց, որը հեռահար նպատակ կունենա ընդգրկել բոլոր եվրոպական ազգերին, որպեսզի կարողանանք միասին պայքարել մեր ընդհանուր շահերի համար՝ ընդդեմ մեր ընդհանուր թշնամիների:

Եվ ահա, սրանք են այն կետերը, այն հստակ գործողությունները, որոնցով մենք կերտելու ենք ավելի կայուն, ավելի բարգավաճ ու ավելի հզոր պետություն, որպեսզի Հայաստանը կարողանա դարձյալ իր կարևոր ու պատմական դերը ստանձնել աշխարհաքաղաքական բեմի վրա: Այս կետերը պատշաճ իրականացնելու համար անհրաժեշտ է լինելու բարեփոխել կամ լիովին նոր նախարարություններ ստեղծել, սակայն, շատերը կմտածեն, որ վերոհիշյալ կետերից շատերի իրականացումը իրատեսական չէ, հատկապես՝ այս պահին: Նրանց մտահոգությունը հասկանալի է, բայց պետք է գիտակցենք, որ աշխարհը փոխվում է ու փոխվում է շատ կտրուկ, որտեղ ներկայիս աշխարհակարգը փլուզվելու է իր ստերի ու կեղծիքների ծանրության տակ՝ մեզ համար հնարավորության պատուհաններ բացելով: Ժամանակը հասունանալու է, ու մենք ստիպված ենք լինելու արմատական փոփոխություններ անել և պետք է պատրաստ լինենք այդ պահին: Եթե մեր նպատակը մեր ազգի համախմբումն է, ապա դա հնարավոր կլինի միմիայն նման վեհ գաղափարների ու նպատակների շուրջ, քանի որ կիսատ-պռատ նպատակները միշտ տարել են ու տանելու են ձախողման: Մենք պետք է հեռատես լինենք և քաջություն ցուցաբերենք՝ չթողնելով, որ վախը մեզ հետ պահի մեր իրական երազանքներին ձգտելուց:

Մենք հավատում ենք, որ որքան հզորանան Հայաստանի դիրքերը երկրագնդի վրա, այնքան ավելի կլուսավորվի աշխարհը և կամրապնդվի քաղաքակրթության հենասյունները: Հետևաբար, այս ծրագրի իրագործումը ոչ միայն համազգային կամ նույնիսկ համարիական նպատակ է, այլև՝ համամարդկային:

Ամեն դեպքում պետք է շեշտենք, որ կարող ենք ամենալավ ծրագրերը գրել, թե կոնկրետ ինչպես ենք պատկերացնում նման ազգային պետությունը, սակայն, եթե այդ ծրագրերի հետևում չլինի կազմակերպված հետևողական պայքար և չլինեն վճռական, անհողդողդ ու անկոտրում կամք ունեցող անձինք, այդ ծրագրերը չեն արժենա այն թղթին, որի վրա գրված են: Մեր կամքը պետք է լինի երկաթից պինդ, իսկ մեր հավատքը՝ մեր լեռներից էլ անսասան, եթե ցանկանում ենք մեր գաղափարները դարձնել իրականություն և տանել դեպի հաղթանակ:

Այդ իսկ պատճառով մեր շարժման կորիզը ստեղծելու համար մենք փորձում ենք ներգրավել արժանապատիվ, հեռատես, գիտակից ու նվիրյալ հայորդիների, ովքեր պատրաստեն ամեն գնով ի կատար ածել անկախ, միացյալ ու հզոր Հայաստանը: Սա պետք է լինի մեր հիմնական տեսլականը և գերագույն նպատակը, որից իրավունք չունենք շեղվելու, քանի որ մեր նպատակը Արարչի նպատակն է և մեր պայքարը Արարչի կամքն իրագործելու պայքարն է: Երազանք կա, որը Մեծ Հայքն է և այն պետք է իրականացվի:

«Հոսանք»-ի խորհրդանիշն ու դրոշը

Մեր ցեղակրոն շարժման՝ «Հոսանք»-ի խորհրդանիշն ու դրոշն է հայկական հավերժության նշանը՝ ոսկեգույն ու սպիտակով՝ մուգ կարմիր ֆոնի վրա, որը գալակտիկայի պտույտներով խորհրդանշում է տիեզերքում երկու հակադիր ուժերի միասնությունը, առանց որի՝ տիեզերքում չի լինի արարում: Հավերժության նշանի պտույտը նաև բնութագրում է հենց «Հոսանք»-ը՝ ցեղի հավիտենական շարժումը: Մուգ կարմիրն էլ խորհրդանշում է ցեղի արյունը՝ այն օղակը, որի միջոցով մենք կարող ենք կապվել Արարչին ու արարչաստեղծ գործընթացի հետ: Որքան մաքուր ու անարատ լինի ցեղի արյունը, այնքան ավելի կայտառ կլինի ցեղի հոգին և հզոր կլինի կապը Արարչի հետ: Այլ կերպ ասած՝ մեր արյունով ենք կապվում հավերժության հետ:

Հավերժության նշանն էլ ունի ութ թև՝ չորս ոսկեգույն և չորս սպիտակ, որովհետև ութ թիվը ոչ միայն հայկական մշակույթում ամենատարածված թիվն է, այլև մաթեմատիկայի ու գիտության մեջ մեծ նշանակություն ունեցող թիվ է: Ութ թիվը մաթեմատիկայի մեջ հենց շրջված հավերժության նշանն է (∞): Մենք ապրում ենք քառաչափ (երեք առանցքները՝ ժամանակի հետ) իրականության մեջ, բայց այդ իրականությունը բաղկացած է «սիս» (փոքր) և «մասիս» (մեծ) աշխարհներից, որոնց համադրությունը տալիս է ութչափանի տարածություն:

Ոսկեգույնի մեջ մենք տեսնում ենք մեր արիական մշակույթի վեհ արժեքները, սպիտակի մեջ՝ ազգային գաղափարները և մուգ կարմիրի մեջ՝ մեր հայրենիքի անկախության ու բարգավաճման համար թափված արյունը: Հավերժության նշանի մեջ էլ տեսնում ենք մեր ցեղի զարգացման համար մղվող հավիտենական պայքարի հաղթանակը: Այս ամենը համապատասխանում է մեր կարգախոսներից մեկին՝ «Պատվի՛ր Մշակույթդ, Սիրի՛ր Ազգդ, Պաշտպանի՛ր Հայրենիքդ»: Ոսկեգույնն ու մուգ կարմիրը նաև հայկական Արտաշեսյանների տոհմի, մասնավորապես՝ Տիգրան Մեծի դրոշի գույներն էին, ում կառավարման ժամանակ Մեծ Հայքը հասել է իր հզորության գագաթնակետին: Սպիտակն էլ եղել է հայկական Բագրատունյաց տոհմի ու հետո Կիլիկիայի հայկական թագավորության դրոշներում, որոնք թշնամիների դեմ ազգային պայքար մղելով, վերականգնել են մեր պետականությունը: Ահա այսպես՝ մեր նախկին արքայական գույների համադրությամբ մեր անպարտելի ազգային խորհրդանիշ՝ հավերժության նշանով, մենք հետ ենք բերելու մեր հայրենիքի ու պետության փառքն ու պատիվը:

«Հոսանք»-ի զինանշանի վահանը խորհրդանշում է մեր գերագույն արժեքների՝ ազգի, հայրենիքի, անկախ պետականության պաշտպանությունը: Թուրը խորհրդանշում է խաղաղություն՝ միայն մեր թշնամիների պարտությամբ ու մեր զինված ուժերի հաղթանակով, իսկ վահանի ու թրի վերևում հայացքը դեպի արևմուտք (Արարատ) սևեռած Տարոնի արծիվը խորհրդանշում է, որ մենք մեր պայքարը հաջողության հասցնելու ու մեր նպատակները իրականացնելու համար պետք է արծվի պես քաջ, ազնիվ, ուժեղ, ճշմարիտ, խելացի, արդար, հավատարիմ, հեռատես, նպատակասլաց, հաստատակամ ու իմաստուն լինենք: Զինանշանը նաև Գարեգին Նժդեհի 1920թ.-ին ստեղծած Լեռնահայաստանի (որը պատմության առաջին հակաթրքաբոլշևիկյան պետությունն է եղել) զինանշանի թարմացված ու ժամանակակից տարբերակն է:

«Հոսանք»-ի խորհրդանշի գրավոր տարբերակում հայկական տառերով գրված է «ՀՈՍԱՆՔ»՝ ոսկե կայծակը մեջտեղում, և այդ կայծակը խորհրդանշում է ոչ միայն հենց էլեկտրականությունը՝ հոսանքը, այլև՝ մարդկությանը լույս բերող կայծը, որը բնութագրում է հենց «Հոսանք»-ի նպատակը: Այդ կայծակը նաև խորհրդանշում է հաղթանակ՝ ըստ

գերմանացի գաղափարախոս ու միստիկ Գվիդո ֆոն Լիստի, ով հին սկանդինավյան «ռունները» անվանել էր «Արմանեն» ռուներ (այսինքն՝ Արմանի ռուներ)՝ գուցե ենթագիտակցաբար զգալով, որ այդ խորհրդանիշները ունեն շատ հին հայկական արմատներ:

Այնպես որ՝ ամեն շարժում պիտի հենց այնպես չօգտագործի անուններ, խորհրդանիշներ և դրոշներ՝ առանց որևէ պատճառի ու իմաստի, ինչպես հիմա գրեթե բոլոր քաղաքական կուսակցություններն ու շարժումներն են անում: Անիմաստ խորհրդանիշներից կբխեն անիմաստ շարժումներ, իմաստալից խորհրդանիշներից՝ իմաստալից շարժումներ: «Հոսանք»-ի դրոշը, կարճ ասած, ապագա հաղթական ու արիական Հայաստանի պետության դրոշն է:

Նժդեհն ասում էր՝ «անպարտելի է այն դրոշը, որը պարզվում է ցեղի համար ու ցեղի անունով», և վստահ ենք, որ հենց «Հոսանք»-ի դրոշի մասին էր խոսքը:

«Հոսանք»-ի և նրա Առաջնորդի մասին

«Հոսանք»-ի մասին

«Հոսանք»-ը ստեղծվել է 2020 թվականի 44-օրյա դավադիր պատերազմից ու 2021 թվականի խայտառակ ընտրություններից հետո, երբ լիովին պարզ դարձավ, որ Հայաստանի ամբողջ քաղաքական համակարգը մինչև հիմքը փտած է ու հակահայկական: Այն վերից վար լի է օտարերկրյա գործակալներով ու դավաճաններով, ովքեր, բռնազավթելով լրատվամիջոցներն ու ստեղծելով տարբեր կուսակցություններ, կարողանում են իրենց կամքը թելադրել քաղաքական դաշտին: Ուստի «Հոսանք»-ը ստեղծվեց որպես այդ համակարգից դուրս գտնվող, մաքուր ու գաղափարական հիմքերով ազգայնական քաղաքական շարժում, որն իսկապես կպայքարի այն նեոբոլշևիկյան օրակարգի դեմ, որն ուղիղ սպառնալիք է մեր ազգին, հայրենիքին ու պետականությանը:

«Հոսանք»-ը պնդում է, որ այն, ինչ մեր արտաքին թշնամիները, մասնավորապես՝ ռուս-թուրք-սիոնիստական դաշինքը և նրանց հետ համագործակցող հայադավները, արեցին Արցախի Հանրապետության դեմ, փորձում են անել նաև ողջ Հայաստանի Հանրապետության հանդեպ՝ մեզ լիովին զրկելով անկախությունից, ինչը կհանգեցնի հայոց նոր ցեղասպանության: Հետևաբար մենք քաջ գիտակցում ենք, որ այս ամենը կանխելու համար պետք է նախևառաջ մեր փրկության հույսը դնենք միայն մեզ վրա և հենվենք սեփական ուժերին, որովհետև միայն նման ազգերն են ունենում իրական դաշնակիցներ, և ոչ թե հովանավորներ: Մեր նպատակն է պատմական ճիշտ պահին ազգային հեղափոխություն իրականացնել, որպեսզի կերտենք ազգային պետություն, որը մեր ազգին կհամախմբի մեկ գաղափարների, մեկ կամքի ու մեկ առաքելության շուրջ. միայն այդ ճանապարհով մենք կկարողանանք սանձել թշնամու բոլոր գրոհները մեր երկրի դեմ: Սակայն նաև լավ հասկանում ենք, որ ազգային հեղափոխությունը և դրանից բխող ազգային զարթոնքն ու վերածնունդը օդից չեն կարող առաջանալ: Դրանք կարող են

ծնվել միայն նվիրյալ չնչին փոքրամասնության քրտնաջան և հետևողական աշխատանքի շնորհիվ՝ այն մարդկանց, ովքեր տարիներ շարունակ նախապես պատրաստվել են ճիշտ պահին ճիշտ քայլեր նախաձեռնելու: Համոզված ենք, որ գալիք մեծ ճգնաժամի ընթացքում այս հակահայկական համակարգն ու իր ստեղծած պատրանքը թղթե տնակի պես փլուզվելու են սեփական ստերի ու կեղծիքների ծանրության տակ, և այդ ժամանակ ճակատագիրը հայ ազգայնականներիս կկոչի լիովին նոր ու արդար համակարգ հիմնադրելու: Մենք պարտավոր ենք մեր պայքարը շարունակել՝ մեր մտքում միշտ պահելով անկախ, միացյալ ու հզոր Հայաստանի տեսլականը՝ հանուն մեր հերոս նախնիների և ապագա սերունդների:

«Հոսանք»-ը չի ստեղծվել անփութորեն կամ ժամանակավոր նպատակներով՝ հայրենակիցներին խաբելու և կեղծ խոստումներով իշխանության գալու համար: Շարժումը պնդում է, որ մենք չենք կարող հավատալ որևէ քաղաքական գործչի կամ ուժի, որի միակ գաղափարախոսությունը իշխանափոխությունն է, և որի միակ նպատակը իշխանության հասնելն է: Մեզ համար իշխանությունը միայն միջոց է՝ Հայաստանը հզորացնելու ճանապարհին: Մեր շարժումը հիմնադրվել է հեռահար նպատակներով ու գաղափարական ամուր հիմքով, որպեսզի կարողանա Հայաստանում առաջացնել իրական, դրական ու մնայուն փոփոխություններ: Մենք մերժում ենք ստրկամտությունը, պարտվողական մտածելակերպը և հանձնվելու գաղափարախոսությունը, որոնք փորձում են ներարկել մեր ազգի մեջ՝ հատկապես վերջին դավադիր պատերազմից հետո: Այդ կործանարար մոտեցումը մեզ աստիճանաբար տարավ խայտառակ պարտության, իսկ հիմա էլ տանում է վերջնական փլուզման: Մենք կասկած չունենք, որ կրկին վերածվելով ուժային գործոնի, ճիշտ ռազմավարություն որդեգրելով, ազգային գաղափարախոսություն կրելով և մեր մարտական ոգին վերականգնելով կկարողանանք նորից հաղթանակ կերտել. միայն հաղթանակի ու արդարության հաստատման շնորհիվ է հնարավոր ունենալ իրական անվտանգություն և խաղաղություն: Մեր շարժումը ստեղծվել է, որպեսզի գալիք մարտահրավերների ու ճգնաժամերի ժամանակ կարողանանք մեր ազգին ճիշտ ուղղությամբ առաջնորդել և այդ խավարի մեջ ցույց տանք հաղթական ու լուսավոր ճանապարհը:

Այդ իրական փոփոխությունները բերելու համար «Հոսանք»-ը պատրաստ է մղել երկարատև գաղափարական պայքար՝ անկախ պետականությունը համարելով ոչ միայն գերագույն արժեք, այլև սրբություն: Մենք սին հույսերով չենք ապրում. գիտենք, որ միայն հաստատակամ ու անձնազոհ պայքարով, ազգային հեղափոխության և իրական ազգային պետության կերտման միջոցով կկարողանանք հասնել մեր նպատակին՝ պաշտպանելով մեր ազգային արժեքներն ու շահերը: Մեր շարժման առաքելությունն է բացել նոր, փառահեղ դարաշրջան մեր ազգի պատմության մեջ. դարաշրջան, որը մենք մեր անսասան հավատով ու անկոտրում կամքով կգրենք ոսկե տառերով:

«Հոսանք»-ը գտնվում է այս փտած, նեոբոլշևիկյան քաղաքական համակարգից դուրս և ամբողջությամբ դեմ է դրան, քանի որ միայն նման քաղաքական շարժումն է ընդունակ Հայաստանում արմատախիլ անելու մեր պետականությունը կործանման տանող հակազգային երևույթները և վերականգնելու մեր Հայրենիքի փառքն ու պատիվը:

«Հոսանք»-ը հայաստանակենտրոն ուժ է, որը հիմնված է բացառապես ազգային գաղափարախոսության վրա և որևէ աջակցություն չի ստանում աղանդների, գործակալական ցանցերի կամ օլիգարխների կողմից: Շարժումն իր համեստ ու սակավաթիվ ռեսուրսներով նպատակ ունի դառնալու լուրջ քաղաքական գործոն և, այս քաոսային վիճակում կարգ ու կանոն հաստատելով, համախմբման հզոր հոսանք ստեղծել

դարերով պառակտված մեր ազգի համար: Միայն այսպիսով կարող ենք հայ ազգայնականներին, հատկապես՝ երիտասարդությանը, բերել նույն գաղափարական հարթակ՝ համախմբելով հավերժության դրոշի ներքո, որպեսզի մեկ մարմնի պես, միասին, ուս ուսի տված՝ առաջ գնանք և իրականացնենք մեր երազանքը:

«Հոսանք»-ը Նժդեհի ոգու օրհնությամբ ձգտում է ցեղակրոն գաղափարախոսությունը վերածել հզոր, ժամանակակից շարժման և հասնել իշխանության, որպեսզի այս պարտված ու ստորացված վիճակից անցում կատարվի դեպի ազգային պետություն, և մեր պատմության մեջ բացվի Ցեղակրոն Հայաստանի էջը: Միայն այդ էջը բացելով է հնարավոր ունենալ ծաղկող տնտեսություն, բարգավաճ հասարակություն և հզոր բանակ, որը կկարողանա իր կամքը թելադրել ոսոխին ու սեփական խոսքն ասել աշխարհաքաղաքական բեմում: Մենք վստահ ենք մեր հաղթանակին, որովհետև այս աշխարհում չկա ավելի հզոր ուժ, քան այն գաղափարը, որի ժամանակը հասունացել է:

«Հոսանք»-ի Առաջնորդի մասին

Հայկ Նազարյանը ծնվել է 1989 թվականի մայիսի 12-ին ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգում: Ընտանիքի չորս երեխաներից ամենափոքրն է: 2015 թվականին Կալիֆոռնիայի պետական համալսարանում ստացել է ֆիզիկայի մագիստրոսի կոչում և երեք տարի դասավանդել այնտեղ: Հոգու խորքում միշտ զգալով, որ ժամանակակից Բաբելոնի վերածված Ամերիկան իր երկիրը չէ, և ոգևորված Ապրիլյան քառօրյա պատերազմով՝ 2016 թվականի նոյեմբերին նա որոշում է միակողմ տոմսով մեկնել Հայաստան՝ մշտական բնակության: Ռազմական փորձ ձեռք բերելու նպատակով պայմանագրային հիմունքներով ծառայում է Տավուշի սահմանագծում: Որպես կամավոր՝ նա սկզբից մինչև վերջ մասնակցում է 44-օրյա պատերազմին՝ Մարտակերտի շրջանում:

Նազարյանը 20 տարուց ավելի՝ իր ողջ գիտակից կյանքում, եղել է ազգային գաղափարախոսության կրող և սեփական քայլերով, այլ ոչ թե լոկ խոսքերով, ապացուցել իր հայրենասիրությունն ու ազգայնական լինելը: Ազգային պայքարին ու ճշմարտությանը հավատարիմ մնալով՝ նա երբեք չի անդամագրվել որևէ քաղաքական կուսակցության, չի փոխել քաղաքական ճամբարներ, չի զիջել իր սկզբունքները և ոչ մեկին չի քծնել՝ քաղաքականության մեջ առաջ գնալու համար:

Արտաքին թշնամիների ու Հայաստանում գործող դավաճանների հանդեպ տածած զայրույթից և անիմաստ ու անբովանդակ քաղաքական թոհուբոհից հիասթափված՝ ռազմաճակատից վերադառնալուց գրեթե մեկ տարի անց՝ 2021 թվականին, նա որոշում է որպես անհայտ հայրենադարձ ու հասարակ շարքային զինվոր հիմնադրել «Հոսանք»-ը: Այն Հայաստանի միակ ցեղակրոն քաղաքական շարժումն է, որը նորից կյանքի է կոչում ցեղակրոնության գաղափարները և 21-րդ դարում բերում քաղաքական դաշտ, որպեսզի ի կատար ածվի Նժդեհի երազանքը:

Նա իրեն համարում է հայ ազգի քաղաքական զինվոր, որի կյանքի նպատակն է Հայաստանում ազգային հեղափոխության միջոցով առաջացնել իրական ազգային զարթոնք ու վերածնունդ:

Ինչո՞ւ և ինչպե՞ս միանալ կամ աջակցել «Հոսանք»-ին

Ինչո՞ւ միանալ կամ աջակցել «Հոսանք»-ին

Եթե ծանոթ եք մեր գաղափարներին և որոշ ժամանակ է, ինչ հետևում եք շարժմանը կամ նույնիսկ նոր եք իմանում շարժման մասին, գուցե մտածում եք, թե ինչու պետք է միանաք կամ աջակցեք «Հոսանք»-ին՝ լինելով հայրենասեր հայ, ով մտահոգված է մեր ազգի, հայրենիքի ու պետականության մասին: Ծանոթանալով և ուսումնասիրելով մեր նյութերը, վստահ եմ կհամոզվեք, որ «Հոսանք»-ը ոչ միայն լիովին հայամետ ու հայաստանակենտրոն քաղաքական կազմակերպություն է, որն ունի լուրջ ու հեռատես նպատակ, և, որը չի ֆինանսավորվում կամ աջակցվում որևէ գործակալական ցանցի, օլիգարխի կամ աղանդի կողմից, այլև միակ ցեղակրոն քաղաքական շարժումն է, որն արդեն իսկ քսանմեկերորդ դարում Նժդեհի գաղափարները կյանքի է կոչում և բերում մեր քաղաքական դաշտ:

Հետևաբար, եթե որևէ հայ, ով իրեն գիտակից ու պատասխանատու մարդ է համարում, պետք է աջակցի նման մի քաղաքական շարժման, քանի որ մեր բոլոր խնդիրները ունեն նախ և առաջ քաղաքական բնույթ: Որքան էլ փորձենք առանձին մշակույթի կամ կրթական ոլորտը բարելավել մեր կամավոր մասնակցությամբ կամ ֆինանսական աջակցությամբ, այդ ամենը շատ քիչ օգուտ կարող է տալ, եթե չլուծվի մեր հայրենիքի բուն խնդիրը, որը հենց քաղաքական է: Մինչև մենք չունենանք իսկապես ազգային ու հայկական քաղաքական ուժ, որն իսկապես կարող է ներկայացնել հայ ազգի շահերը, մեր հասարակությանը տարբեր ձևերով ազգայնացնելու բոլոր փորձերը ապարդյուն կանցնեն:

Այդ իսկ պատճառով մենք դիմում ենք բոլոր՝ պարտականություններ ճանաչող ու անձնական պատասխանատվություն կրող ազգայնական հայերին՝ թե՛ Հայաստանում, և թե՛ Սփյուռքում ապրող, ովքեր սրտանց, իրապես ուզում են տեսնել ազգային, հայկական պետություն, որ մեզ աջակցեն ինչով, որ կարող են:

Ձեր նվիրումն ու ներդրումները բազմիցս ապացուցել են, որ հայի հոգին կապ չունի միայն աշխարհագրության հետ. այն ուժ է, որ բաբախում է, որտեղ էլ որ լինենք: Այսօր մեր հայրենիքը կանգնած է նոր ու օրհասական մարտահրավերների առաջ, և մեր սերունդն ունի պատմական հնարավորություն ոչ միայն վերափոխելու, այլև՝ իրապես հեղափոխելու Հայաստանը, վերակառուցելու ազգային արժանապատվության, ինքնիշխանության և հզոր պետականության հիմքերը: Դրա համար մենք միայն գաղափարական պայքարի մեջ չենք. մենք գործի մարդ ենք, ովքեր կամաց-կամաց իրականացնում են համակարգային փոփոխություններ:

«Հոսանք»-ը ձգտում է հզոր, ինքնիշխան, ազգային շահերով առաջնորդվող Հայաստանի: Մենք աշխատում ենք ոչ թե որպես ընդամենը քաղաքական գործիչներ, այլ որպես ազգային պայքարի մասնակիցներ, ավելի ճիշտ՝ քաղաքական մարտիկներ, որոնց նպատակը ոչ թե կարճաժամկետ հաղթանակներն են, այլ երկարաժամկետ հաղթանակը՝ Հայաստանի վերածնունդը: Սակայն, մեր պայքարը առաջ տանելու համար հարկավոր են ռեսուրսներ, ֆինանսական կայունություն և հայերի լավագույն հատվածի համախմբվածություն:

Ձեր ներդրումը կարող է փոխել խաղի կանոնները: Հայաստանի ապագան կախված է ոչ միայն մեր վճռականությունից, այլև՝ ձեր աջակցության արդյունավետությունից: Մենք չենք խնդրում բարեգործություն՝ մենք առաջարկում ենք համագործակցություն, որտեղ

դուք կտեսնեք ձեր մասնակցության իրական արդյունքը:

Վստահ ենք, որ «Հոսանք»-ը միակ քաղաքական ուժը կարող է լինել աշխարհում, որը կարող է կամուրջ ստեղծել Հայաստանի և Սփյուռքի միջև, քանի որ մեր շարժման գաղափարական հիմքում տարանջատում չկա սփյուռքահայերի ու հայաստանցիների միջև՝ գիտակցելով, որ բոլոր հայերը, անկախ նրանից, թե աշխարհի որ անկյունում ապրեն, ունեն նույն պարտականությունը մեր հայրենիքի նկատմամբ:

Մեր ժողովրդի մեծամասնությունը մեր մասին դեռ չգիտի ու չի էլ լսել, որովհետև ներկայիս հակահայկական համակարգի կողմից առայժմ համարվում ենք այսպես ասած «մարգինալ» քաղաքական կազմակերպություն, որն իբրև «ապագա չունի», սակայն ազգային մտածելակերպ ունեցող հայ երիտասարդների զգալի մասը՝ թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում մեզ ավելի լավ է ճանաչում ու ավելի շատ է համակրում, քան ներկայիս մեծ քաղաքական ուժերին, և սա շատ խոսուն է մեր շարժման ներուժի մասին:

Մենք ձգտում ենք լիովին նոր ազգային քաղաքական էլիտա ստեղծել, որը հիմնված է բացառապես հայրենասիրության և ազգային շահերի վրա, այլ ոչ թե՝ օտար ազդեցությունների կամ նեղ անձնական շահերի: Այդ էլիտան էլ կամաց-կամաց ձևավորվում է նոր սերնդի ազգային երիտասարդներից, որոնց համար անկախ պետականությունը ոչ միայն գերագույն արժեք է, այլև՝ սրբություն:

Մենք տեսնում ենք, որ մեր շարժումը շատ ուշադրություն է գրավում ու համակրանք է ստանում նոր երիտասարդ սերնդի կողմից, ի տարբերություն մյուս քաղաքական շարժումների, որոնք այդ հարցում պարզապես ձախողում են: Սա մեզ համար ցուցիչ է և շատ լավ նշան, որ մենք ոչ միայն ճիշտ ուղին ենք բռնել, այլև այն, որ մեր շարժումը շատ մեծ ապագա ունի:

Շատերը այս պահին կարծում են՝ իմաստ չկա ֆինանսավորել մեզ նման փոքրաթիվ ու, այսպես ասած, «մարգինալ» քաղաքական շարժմանը, քանի որ մենք իբրև ոչ մի հնարավորություն չունենք մեր երկրում գործող մեծ քաղաքական ուժերին այս պայքարում հաղթելու և հասնելու իշխանության: Սա իրականում կարճատեսություն է, քանի որ պատմությունը մեզ բազմիցս ցույց է տվել, որ օրհասական ու քառսային ժամանակներում ճակատագիրը մեզ նման շարժումներին է կանչում գործողություններ անելու համար: Եվ կարծում ենք՝ բոլոր ողջամիտ ու իրատես հայերը քաջ գիտակցում են, որ մեր երկրին սպասվում են նման քառսային ժամանակներ, և մենք պարտավոր ենք պատրաստ լինել այդ փոթորիկին: Նման ծայրահեղ ժամանակներում ազգը փնտրում է այն շարժումներին ու առաջնորդներին, ովքեր կհամարձակվեն արմատական փոփոխություններ իրականացնել: Նման ժամանակներում, մեզ նման «մարգինալ» շարժումները երկրաչափորեն աճում են:

Մեր քաղաքական հակառակորդների քանակական առավելությունը ու նրանց աստղաբաշխական ռեսուրսները մեզ չեն վախեցնում, քանի որ մենք վստահ ենք, որ նրանք հիմնված են ստերի ու կեղծիքների վրա, և կտապալվեն թղթե տնակի պես մի փոքր արտաշնչից: Իսկ այն, ինչ մենք ենք կառուցում, թեպետ փոքր այս պահին, կունենա ամուր հիմքեր, որը կշարունակվի դարեդար, նույնիսկ մեր ոսկորների փոշիանալուց հետո:

Հետևաբար, «Հոսանք»-ին միանալը կամ աջակցելը հարկավոր է յուրաքանչյուր գիտակից հայ ազգայնականի համար, քանի որ դա անելով դու հավաստիացնում ես, որ Հայաստանը ոչ միայն ներկայում, այլև ապագայում կունենա իրապես հայկական քաղաքական կառույց, որով կկերտվի մեր երազած ազգային պետությունը: Հայությունը պետք է կառավարի իր ճակատագիրը, ոչ թե ենթարկվի արտաքին խաղացողներին, և դուք շարժման համար ձեր փոքր լուման ներդնելով՝ կարող եք չափազանց օգնել այս հարցում:

Կարող եք վստահ լինել, որ ձեր ներդրումը, որքան էլ մեծ կամ փոքր լինի, չի գնալու անհայտ ուղղությամբ, այլ կծառայի մեր համազգային նպատակի իրագործմանը:

Ինչպե՞ս միանալ կամ աջակցել «Հոսանք»-ին

«Հոսանք»-ին միանալու համար կարող եք այցելել «Հոսանք»-ի կայքէջը և լրացնել այնտեղ տեղադրված հարցաթերթիկը, որից հետո կհամարվեք անդամ, եթե համաձայն եք «Հոսանք»-ի անդամագրության համաձայնագրի հետ և համապատասխանում եք շարժման որակավորումներին, որոնք ևս տեղադրված են կայքէջում: Մեր առաջնային նպատակներից է կառուցել հավատարիմ, նվիրյալ և գաղափարական կորիզ շարժման համար, որի մաս Դուք կարող եք լինել: Այդպիսով՝ մենք կամաց-կամաց կընդարձակենք մեր շարքերը և աստիճանաբար կդառնանք մեծ քաղաքական ուժ, ու բոլորը մեզ հաշվի կառնեն:

Եթե դեռ պատրաստ չեք միանալու ու ուզում եք ուղղակի ինչ-որ կերպ աջակցել ու օգուտ տալ «Հոսանք»-ին, կարող եք մեզ հետ կապ հաստատել և Դու՛ք ասել, թե ինչ հմտություններով կարող եք ձեր աջակցությունը ցուցաբերել մեր շարժմանը: Մեզ միշտ հարկավոր են լրագրողներ, իրավաբաններ, գրողներ, գրաֆիկ դիզայներներ, թվային նկարիչներ, տեսանյութ մոնտաժողներ, կինոօպերատորներ, հաշվապահներ, մարզիչներ և առհասարակ ակտիվ ու հմտություններ ունեցող մասնագետներ, հատկապես՝ երիտասարդներ: Եթե չունեք նման հմտություններ, կարող եք օգտակար լինել՝ ուղղակի մեր տեսանյութերը ու գրառումները տարածելով և ձեր բոլոր ծանոթներին մեր մասին պատմելով: Իսկ, եթե ինչ-որ պատճառով չեք ուզում բացահայտ աջակցություն ցուցաբերել, կարող եք ֆինանսապես աջակցել՝ մեծ կամ փոքր գումարով, և վստահ կարող եք լինել, որ ամեն դրամը կգնա շարժման զարգացման նպատակին:

Մեզ պետք է ֆինանսական աջակցություն, որպեսզի կարողանանք վարձատրել հայրենասեր մասնագետներին և շարժման հետ կապված բոլոր կարևոր ծախսերը փակել: Կազմակերպված շարժման համար մենք պիտի կարողանանք ունակ մարդկանց գործի դնել, ովքեր կարող են մեր շարժման ընդարձակման հարցով զբաղվել՝ որպես հիմնական աշխատանք: Դուք կարող եք տեղեկանալ, թե ինչպես ֆիանսապես աջակցել մեզ՝ այցելելով մեր կայքը և ուսումնասիրելով նվիրատվության էջը: Պատմության մեջ ոչ մի քաղաքական շարժում առաջ չի գնացել առանց ֆինանսավորման, և այս ժամանակակից դարում էլ ոչինչ չի փոխվել այդ հարցում: Որքան էլ փոքր լինի ձեր ներդրումը այս շարժման մեջ, դա մեծ տարբերություն կտա վերջում, երբ շատերը սկսեն միանալ: Այդ իսկ պատճառով մենք անչափ շնորհակալ ենք ցուցաբերած ամեն տեսակ աջակցության համար:

Մեր թշնամիները ուրախանում են, երբ տեսնում են պառակտված հայ ժողովուրդ՝ միաժամանակ ամենից շատ վախենալով համախմբված հայ ազգից: Առանձին-առանձին մենք ընդամենը ողորմելի էլեկտրոններ ենք, իսկ միասին՝ հոսանք: Մեր պայքարի հաջողությունը իսկապես կլինի կամքի հաղթանակի մեծագույն վկայությունը: «Հոսանք»-ը ճակատագիր ունի, և մեզ ոչինչ չի կարող կանգնեցնել: Սա ոչ թե մեկ շարժման, այլ ամբողջ հայ ազգի պայքարն է:

Աջակցեք կամ միացե՛ք «Հոսանք»-ին, դարձե՛ք հայության նոր վերածննդի հիմնասյունը:

ՀՈՍԱՆՔ

ՄԵԿ ԱԶԳ, ՄԵԿ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՄԵԿ ԿԱՄՔ

hosank.net